## Արձանագրություն Ամասիա համայնքի ղեկավարի հաշվետու ժողովից

2015թ. հուլիսի 14-ին Արմավիրի մարզի Ամասիա համայնքում կայացավ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Գ.Ավդալյանի 2015թ.-ի 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների հաշվետվությունը: Ժողովին ներկա էին համայնքի ավագանիները, համայնքի 50 բնակիչներ և մարզպետարանի ներկայացուցիչ Մ.Սարիբեկյանը: 2015թ.-ին կատարվել է հետևյալ մուտքերը

| | տարեկան | փաստացի |
|---|---|---|
| հողի հարկ | 8000 | 302.7 |
| գույքահարկ | 1497.6 | 172.9 |
| վարձ. վճարներ | 73.0 | 19.8 |
| դոտացիա | 14784.4 | 7391.6 |
| տեղական տուրքեր | 50.0 | 0 |
| վարչ. բյուջեի | | |
| պահուստ. ֆոնդ.բյուջե | | |
| կատ. համալրում | 1050 | - |
| տարեսկզբի ազատ | | |
| մնացորդ | 430.45 | 430.45 |

2015թ.-ի ընթացքում կատարված ծախսերը

| | | |
|---|---|---|
| 1.կառավարման ապարատ | 14099.3 | 5456.54 |
| այդ թվում | | |
| աշխատավարձ | 13249.3 | 4954.48 |
| էլ. էներգիա | 150 | 150 |
| տեղ. ծառ | 200 | 42 |
| գրաս. նյութեր | 300 | 200 |
| կապի ծառ | 200 | 110.06 |

| | | |
|---|---|---|
| 2.բնակ.կոմ. տնտ, | 4050 | 2421.39 |
| այդ թվում | | |
| աշխատավարձ | 850 | 321.39 |
| խմելու ջրի էլ. էն. վճարներ | 3850 | 2321.39 |
| փողոցների լուսավորություն | 200 | 100 |
| 4.գրադարան | 1250 | 354.11 |
| այդ թվում | | |
| աշխատավարձ | 850 | 304.11 |
| Այլ.մշ.ծախս | 400 | 50 |
| 5. սոց ապահովություն | 1000.0 | |
| Ընդամենը | 19399.3 | 8232.04 |

2015թ.-ին կատարված աշխատանքները

1.Կատարվել է դաշտամիջյան ճանապարհների ավազապատման աշխատանքներ:

2.Կազմակերպվել է աղբահանման աշխատանքներ:

3.Խորքային հորի պոմպի ընթացիկ նորոգում:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նաև 2015թ.-ի 2-րդ կիսամյակի ընթացքում կատարվելիք հետևյալ աշխատանքների մասին՝

1.նոր թաղամասի խմելու ջրի ջրագծի անցկացում

2. համայնքի 2-րդ և 3-րդ փողոցների լուսավորության անցկացում

Արտահայտվեցին համայնքի բնակիչներ Արկադի Խոյեցյանը և Վաչագան Ենոքյանը:

Արտահայտվողները նշեցին մշակույթի տան անմխիթար վիճակի մասին և առաջարկեցին պետական ծրագրերի շրջանակներում կատարել մշակույթի տան վերանորոգման աշխատանքները:

Այնուհետև ելույթ ունեցավ մարզպետարանի ներկայացուցիչ Մ.Սարիբեկյանը:Նա դիմեց համայնքի բնակիչներին ակտիվություն ցուցաբերել հողի հարկի վարձավճարների մուծման գործընթացում և համայնքի ղեկավարի ներկայացրած հաշվետվությունը գնահատեց բավարար:

Իսկականի հետ ճիշտ է:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար Գ.Ավդալյան